ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատ մարզի Սիփանիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Սիփանիկ, (093)256103 sipanik@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2014թվականի N 32

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով.

Սիփանիկ համայնքի ավագանին
ՈՐՈՇՈՒՄ Է
Հաստատել համայնքի ավագանու 24.11.2014թ թիվ 9 նիստի օրակարգը

1.Սիփանիկի համայնքի ղեկավարի աշխատավարձի և գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
2.Սիփանիկ համայնքում 2015թ. տեղական տուրքերը և վճարները սահմանելու մասին:
3.Գյուղապետարանի գույքի գույքագրման արդյունքները հաստատելու մասին:
4.Համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման տնամերձ հողամասը աճուրդ վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Կողմ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԵԼԻԿՈ Կողմ
3. ՎԱՐՈՋՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ Կողմ
4. ՓՈՒՐԹՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ Կողմ
5. ՕՍԵՊՅԱՆ ԷԼԲՐՈՒՍ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատ մարզի Սիփանիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Սիփանիկ, (093)256103 sipanik@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2014թվականի N 33-Ն

ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով

Սիփանիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Սիփանիկ համայնքի ղեկավարի աշխատավարձի և գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 7:

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը
Համայնքի ղեկավար	1	150000
Համայնքային ծառայության պաշտոններ		
Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	120000
Գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	119500
Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	119000
Գյուղապետարանի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	105000
Տեխնիկական աշխատողներ		
Պահակ	1	80000
Հավաքարար	1	67100

Կողմ - 5, դեմ – 0, ձեռնպահ -0

1. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԵԼԻԿՈ
3. ՎԱՐՈԶՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՓՈՒՐԹՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՕՍԵՊՅԱՆ ԷԼԲՐՈՒՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատ մարզի Սիփանիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Սիփանիկ, (093)256103 sipanik@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2014թվականի N 34-Ն

ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով.

Սիփանիկ համայնքիմ ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Սիփանիկ համայնքում 2015թ-ի համար սահմանված հետևյալ տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների /նեռարյալ ոչ հիմնական / շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանել.

Հիմնական օբյեկտների համար.

1) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի տների, ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար - 7500 դրամ

2) սույն կետի 1) ենթակետով չնախատեսված օբյեկտների համար.

ա. 201-500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 15000 դրամ

բ. 501-1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -25000 դրամ

գ. 1001-3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -25000 դրամ

դ. 3001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 50000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար.

3) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 դրամ

4) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչև 1500 դրամ. 2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ

շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 2500 դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրքը սահմանել 2000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրքը սահմանել 1750 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 100 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000 դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30 000 դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 3000 դրամ.
ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 500 դրամ.

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերին վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի համար տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը սահմանել 500 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:
10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել - 5000 դրամ
11. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել - 3000 դրամ
12. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման հետ կապված մասնակցության վճար սահմանել 3000 դրամ:
13. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճարը սահմանել.
1) յուրաքանչյուր բնակչի համար- 10 դրամ,
2) սպասարկում իրականացնող կազմակերպությունների համար - 400 դրամ
Սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի դրույքաչափերը կիրառվել են 0.5 գործակցով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԵԼԻԿՈ
3. ՎԱՐՈԶՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՓՈՒՐԹՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՕՍԵՊՅԱՆ ԷԼԲՐՈՒՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատ մարզի Սիփանիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Սիփանիկ, (093)256103 sipanik@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2014թվականի N 35

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով

Հաստատել Սիփանիկ համայնքի գյուղապետարանի 2014թ գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն գույքագրման հանձնաժողովի կողմից կազմած ակտի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Կողմ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԵԼԻԿՈ Կողմ
3. ՎԱՐՈՋՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ Կողմ
4. ՓՈՒՐԹՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ Կողմ
5. ՕՍԵՊՅԱՆ ԷԼԲՐՈՒՍ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատ մարզի Սիփանիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Սիփանիկ, (093)256103 sipanik@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2014թվականի N 36

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 3-րդ կետի, 67-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Սիփանիկ համայնքի ավագանին
ՈՐՈՇՈՒՄ Է

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի անշարժ գույքի հատակագծին համապատասխան հետևյալ բնակելի կառուցապատման տնամերձ հողամասը օտարել աճուրդ վաճառքի միջոցով.

   03-085-0003-0025 0.10996 հա 1լոտ

2. Օտարվող հողի մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ՆԵԼԻԿՈ
3. ՎԱՐՈՋՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՓՈՒՐԹՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՕՍԵՊՅԱՆ ԷԼԲՐՈՒՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ